Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

08.05.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 04.05.2015թ.-ի թիվ 59 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությունում անցկացվեց 2015թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց քարտուղարության պետ՝ Հ.Կարապետյանը:

Նախնական տվյալներ.

Քարտուղարությունը կազմված է ընդհանուր և վարչատնտեսական բաժիններից: Ընդհանուր բաժնում ընդգրկված են բաժնի պետը և 2 1-ին կարգի մասնագետ: Վարչատնտեսական բաժնում ընդգրկված են բաժնի պետը, 1 գլխավոր մասնագետ և 1 1-ին կարգի մասնագետ: Քարտուղարությունը ղեկավարում է քարտուղարության պետը: Քարտուղարությունն ունի քարտուղարության կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Քարտուղարության պետը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում՝ քարտուղարության գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

ա/ Քարտուղարության կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը ՀՀ Քաղաքացիական և ՀՀ Աշխատանքային օրենսգրքերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>,<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2003 թվականի սեպտեմբերի 11-ի <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործավարության կարգը հաստատելու մասին>> N72-Ն որոշման պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեց՝ ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ.Ավետիսանը: ՈՒՆի բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի փորձ:

Համադրել եմ ՀՀ Քաղաքացիական և ՀՀ Աշխատանքային օրենսգրքերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2003 թվականի սեպտեմբերի 11-ի <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործավարության կարգը հաստատելու մասին>> N72-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերի պահանջներով վերապահված քարտուղարության պետի և աշխատակիցների լիազորությունները քարտուղարության կանոնադրությամբ և աշխատակիցների պաշտոնի անձնագրերով սահմանված լիազորությունների հետ:

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցի, որ քարտուղարության կանոնադրությամբ և քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտոր՝ Հ. Ավետիսյան

Քարտուղարության պետ՝ Հ. Կարապետյան